ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
«ԱՅԳԵՇԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

«02» « մայիս» 2024թ. N231

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Խուդաթյան

Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ ՀՀ Արմավիրի մարզի <<Այգեշատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում առկա է ուսուցչի թափուր տեղ հետևյալ առարկաներից՝

Ինֆորմատիկա -8 ժամ

Աշխարհագրություն -11 դասաժամ

Կերպարվեստ -2 ժամ

Երաժշտություն - 4 դասաժամ

Տեխնոլոգիա - 3 դասաժամ

Ռուսաց լեզու - 27 դասաժամ

Հայ եկեղեցու պատմություն - 9 դասաժամ

Հայոց լեզու և հայ գրակ. - 20 ժամ

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

1116, Խոյ համայնք, Այգեշատ գյուղ, Մայիսյան փողոց, 15 շենք, հեռ.՝ 094200232, էլ. փոստ՝ aygeshatvagarshapat@mail.ru

Մրցույթ՝ Արմավիրի մարզի <<Այգեշատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի Ինֆորմատիկա(8 դասաժամ), Աշխարհագրություն (11 դասաժամ), Տեխնոլոգիա (3 դասաժամ), Կերպարվեստ (2 դասաժամ), Երաժշտություն (4 դասաժամ), Ռ, լեզու (27 դասաժամ), Հայ եկեղոցու պատմություն (9 դասաժամ), Հայոց լեզու և հայ գրակ.(20 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մայիսի 2-ից մինչև մայիսի 16-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթները տեղի կունենան **2024 թ. մայիսի 20-ին՝ ժամը 14:00-ին**, Արմավիրի մարզի Այգեշատի միջնակարգ դպրոցում, հասցե՝ Արմավիրի մարզ,Վաղարշապատի տարածաշրջան, գ. Այգեշատ Մայիսյան փողոց,15 շենք : Տեղեկությունների համար զանգահարել 094-200-232 հեռախոսահամարով: